ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2
ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

Ք. ՉԱՐԵՆՑԱՎԱՆ

15.03.2019Թ.

Համայնքի ավագանու նիստի աշխատանքների ներկա են ավագանու 11 անդամները:

Բացակայում են Ն.Վարդանյանը, Տ.Եփրեմյանը, Մ.Գասպարյանը և Ա.Փանոսյանը

Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում են՝
Համայնքի ղեկավարի տեղակալ Վ. Չիլինգարյանը, աշխատակազմի քարտուղարի ժ/պ Ս.Մուրադյանը, համայնքապետարանի աշխատակազմի բաժնի պետեր Վ.Բարսամյանը, Բ. Բալբաբյանը,Ա.Զաքարյանը, Ս.Շահնազարյանը և գյուղերի վարչական ղեկավարները:
Համայնքի ղեկավար Հ. Շահգալդյան

Ձեզ եմ ներկայացնում համայնքի ավագանու թիվ 2 հերթական նիստի օրակարգը՝

1. Չարենցավան համայնքի սեփականություն հանդիսացող հողատարածքները աճուրդային կարգով օտարելու և մրցույթային կարգով վարձակալությամբ տրամադրելու թույլտվություն տալու մասին:
2. Համայնքի ավագանու ֆինանսավարկային, բյուջետային և տնտեսական հարցերի մշտական հանձնաժողով ստեղծելու և նրա կազմը հաստատելու մասին:
3. Չարենցավան համայնքի ավագանու 2018 թվականի դեկտեմբերի 14-ի թիվ 81 որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին:
4. Չարենցավան համայնքի ավագանու 2018 թվականի դեկտեմբերի 14-ի թիվ 80 որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին:
5. Չարենցավան համայնքի ավագանու 2018 թվականի դեկտեմբերի 14-ի թիվ 87-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին:
6. Չարենցավան համայնքի 2018 թվականի տարեկան բյուջեի կատարման մասին հաղորդում:
7. Սոցիալական հատուկ արտոնություններ (այլ դասերին չպատկանող) հատվածից գումար հատկացնելու մասին:
8. Չարենցավան համայնքի ղեկավարի տարեկան հաշվետվությունը 2018 թվականի համայնքի զարգացման հնգամյա ծրագրի իրականացման և 2019 թվականի տարեկան աշխատանքային պլանը հաստատելու մասին:
9. Փողոցի անվանակոչելու համար համաձայնություն տալու մասին:
10. Չարենցավան համայնքի Կարենիս գյուղի գլխավոր հատակագծի նախագիծը հաստատելու մասին;

Համայնքի ղեկավար Հ. Շահգալդյան

Եթե առարկություններ չկան, քվեարկության եմ դնում որոշումը օրակարգային հարցի վերաբերյալ:

Կողմ -11 **դեմ - 0** **ձեռնպահ -0**

Օրակարգն ընդունված է /կցվում է որոշումը/:

Լսեցին.

1. Չարենցավան համայնքի սեփականություն հանդիսացող հողատարածքները աճուրդային կարգով օտարելու և մրցույթային կարգով վարձակալությամբ տրամադրելու թույլտվություն տալու մասին:

/Զեկ. Բ.Բալբաբյան/

Ղեկավարվելով Հողային օրենսգրքի 46-րդ հոդվածով և «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով,***առաջարկում եմ*** թույլատրել Չարենցավան համայնքի սեփականություն հանդիսացող հողատարածքները աճուրդային կարգով օտարելու և մրցույթային կարգով վարձակալությամբ տրամադրելու՝ համաձայն հավելվածի:

<u>Համայնքի ղեկավար Հ. Շահգալդյան</u>

Քվեարկության եմ դնում որոշումը:

Կողմ-10 դեմ - 0 ձեռնպահ -1

Որոշումն ընդունված է /կցվում է որոշումը/:

Լսեցին.

2. ***Համայնքի ավագանու ֆինանսավարկային, բյուջետային և տնտեսական հարցերի մշտական հանձնաժողով ստեղծելու և նրա կազմը հաստատելու մասին:***

/Զեկ. Ս.Մուրադյան/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 14-րդ հոդվածի 5-րդ կետով, հիմք ընդունելով Չարենցավան համայնքի ավագանու 2017 թվականի նոյեմբերի 20-ի «Չարենցավան համայնքի ավագանու կանոնակարգը ընդունելու մասին» թիվ 62-Ն որոշման 23-րդ կետը,***առաջարկում եմ.*** ստեղծել համայնքի ավագանու ֆինանսավարկային, բյուջետային և տնտեսական հարցերի մշտական հանձնաժողով հետևյալ կազմով՝

Սահակյան Երեմ ***Վարդանյան Նորիկ***

Պողոսյան Մնացական ***Խլղաթյան Արսեն***

Գասպարյան Անատոլի

<u>Համայնքի ղեկավար Հ. Շահգալդյան</u>

Քվեարկության եմ դնում որոշումը:

Կողմ-11 դեմ - 0 ձեռնպահ -0

Որոշումն ընդունված է /կցվում է որոշումը/:

Լսեցին.

3. Չարենցավան համայնքի ավագանու 2018 թվականի դեկտեմբերի 14-ի թիվ 81 որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին:

/Զեկ. Ս.Մուրադյան/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ և 35-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասով դրույթներով ***,առաջարկում եմ.***

1. Չարենցավան համայնքի ավագանու 2018 թվականի դեկտեմբերի 14-ի «**Չարենցավանի համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների 2018 թվականի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին**» N 81 որոշման NN 1-9 և 12, 13 հավելվածները շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածների:

2. Սահմանել, որ սույն որոշման 1 հավելվածի՝

1) 2-րդ և 3-րդ տողերում նշված պաշտոնային դրույքաչափերը ուժի մեջ են մտնում 2019 թվականի ապրիլի 1-ից:

2) 4-ից-9-րդ տողերում նշված պաշտոնային դրույքաչափերը ուժի մեջ են մտնում 2019 թվականի հուլիսի 1-ից:

3. Սահմանել, որ սույն որոշման 2 հավելվածի՝

1) 2-ից-4-րդ տողերում նշված պաշտոնային դրույքաչափերը ուժի մեջ են մտնում 2019 թվականի ապրիլի 1-ից:

2) 5-ից-14-րդ տողերում նշված պաշտոնային դրույքաչափերը ուժի մեջ են մտնում 2019 թվականի հուլիսի 1-ից:

4. Սահմանել, որ սույն որոշման 3 հավելվածի՝

1) 2-րդ և 3-րդ տողերում նշված պաշտոնային դրույքաչափերը ուժի մեջ են մտնում 2019 թվականի ապրիլի 1-ից:

2) 4-ից-11-րդ տողերում նշված պաշտոնային դրույքաչափերը ուժի մեջ են մտնում 2019 թվականի հուլիսի 1-ից:

5. Սահմանել, որ սույն որոշման 4 հավելվածի՝

1) 2-րդ և 3-րդ տողերում նշված պաշտոնային դրույքաչափերը ուժի մեջ են մտնում 2019 թվականի ապրիլի 1-ից:

2) 4-ից-9-րդ տողերում նշված պաշտոնային դրույքաչափերը ուժի մեջ են մտնում 2019 թվականի հուլիսի 1-ից:

6. Սահմանել, որ սույն որոշման 5 հավելվածի՝

1) 2-ից-4-րդ տողերում նշված պաշտոնային դրույքաչափերը ուժի մեջ են մտնում 2019 թվականի ապրիլի 1-ից:

2) 5-ից-14-րդ տողերում նշված պաշտոնային դրույքաչափերը ուժի մեջ են մտնում 2019 թվականի հուլիսի 1-ից:

7. Սահմանել, որ սույն որոշման 6 հավելվածի՝

1) 2-րդ տողում նշված պաշտոնային դրույքաչափը ուժի մեջ է մտնում 2019 թվականի ապրիլի 1-ից:

2) 5-րդ տողում նշված պաշտոնային դրույքաչափերը ուժի մեջ են մտնում 2019 թվականի հուլիսի 1-ից:

8. Սահմանել, որ սույն որոշման 7 հավելվածի՝

1) 2-րդ և 3-րդ տողերում նշված պաշտոնային դրույքաչափերը ուժի մեջ են մտնում 2019 թվականի ապրիլի 1-ից:

2) 6-րդ և 8-րդ տողերում նշված պաշտոնային դրույքաչափերը ուժի մեջ են մտնում 2019 թվականի հուլիսի 1-ից:

9. Սահմանել, որ սույն որոշման 8 հավելվածի՝

1) 2-րդ տողում նշված պաշտոնային դրույքաչափը ուժի մեջ է մտնում 2019 թվականի ապրիլի 1-ից:

2) 6-րդ տողում նշված պաշտոնային դրույքաչափերը ուժի մեջ են մտնում 2019 թվականի հուլիսի 1-ից

10. Սահմանել, որ սույն որոշման 9 հավելվածի՝

1) 2-րդ և 3-րդ տողերում նշված պաշտոնային դրույքաչափերը ուժի մեջ են մտնում 2019 թվականի ապրիլի 1-ից:

2) 4-րդ և 5-րդ տողերում նշված պաշտոնային դրույքաչափերը ուժի մեջ են մտնում 2019 թվականի հուլիսի 1-ից

11. Սահմանել, որ սույն որոշման 12 հավելվածի՝

1) 2-րդ և 3-րդ տողերում նշված պաշտոնային դրույքաչափերը ուժի մեջ են մտնում 2019 թվականի ապրիլի 1-ից:

2) 4-րդ տողում նշված պաշտոնային դրույքաչափերը ուժի մեջ են մտնում 2019 թվականի հուլիսի 1-ից:

12. Սահմանել, որ սույն որոշման 13 հավելվածի՝

1) 2-րդ-4-րդ տողերում նշված պաշտոնային դրույքաչափերը ուժի մեջ են մտնում 2019 թվականի ապրիլի 1-ից:

2) 5-րդ տողերում նշված պաշտոնային դրույքաչափերը ուժի մեջ են մտնում 2019 թվականի հուլիսի 1-ից:

Համայնքի ղեկավար Հ. Շահգալդյան

Քվեարկության եմ դնում որոշումը:

Կողմ - 11 դեմ - 0 ձեռնպահ -0

Որոշումն ընդունված է /կցվում է որոշումը/:

Լսեցին.

4. Զարենցավան համայնքի ավագանու 2018 թվականի դեկտեմբերի 14-ի թիվ 80 որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին:

/Զեկ. Ս.Մուրադյան/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետի, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 34-րդ հոդվածով, հաշվի առնելով Արզական գյուղի վարչական ղեկավար Լ.Մարգարյանի գրությունը.***առաջարկում եմ*** Զարենցավան համայնքի ավագանու 2018 թվականի դեկտեմբերի 14-ի «Զարենցավանի համայնքապետարանի աշխատակազմի 2019 թվականի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին» թիվ 80 որոշման հավելվածի 64-րդ տողի «10» թիվը փոխարինել «10,5» թվով.

Համայնքի ղեկավար Հ. Շահգալդյան

Քվեարկության եմ դնում որոշումը:

Կողմ - 11 դեմ - 0 ձեռնպահ -0

Որոշումն ընդունված է /կցվում է որոշումը/:

Լսեցին.

5. ***Չարենցավան համայնքի ավագանու 2018 թվականի դեկտեմբերի 14-ի թիվ 87-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին:***

/Զեկ. Ս.Շահնազարյան/

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության Բյուջետային համակարգի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ մասի դրույթներով և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 34-րդ հոդվածով,***առաջարկում եմ.*** Չարենցավան համայնքի ավագանու 2018 թվականի դեկտեմբերի 14-ի «Չարենցավան համայնքի 2019 թվականի բյուջեն հաստատելու մասին» թիվ 87-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները.

1) Հաստատված բյուջեի վարչական մասի՝

ա. **7422** «Համայնքի վարչական տարածքում ինքնակամ կառուցված շենքերի, շինությունների օրինականացման համար վճարներ» հոդվածի «23900.0» թիվը փոխարինել «60791.5» թվով,

2) Հաստատված բյուջեի ֆոնդային մասի՝

ա. **8411** «Հողի իրացումից մուտքեր» հոդվածի «60772.5» թիվը փոխարինել «85393.6» թվով,

3) Համայնքի բյուջեի ծախսերի վարչական մասում կատարել հետևյալ փոփոխությունները.

ա. 01-1-1 «Համայնքապետարանի պահպանման ծախսեր» - ի՝

աա. 4213 «Կոմունալ ծառայություններ» սինթետիկ հաշվի «380.0» թիվը փոխարինել «320.0» թվով,

աբ. 4823 «Պարտադիր վճարներ» սինթետիկ հաշվի «100.0» թիվը փոխարինել «160.0» թվով,

բ. 0161 «Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ (այլ դասերին չպատկանող)» - ի 4214 «Կապի ծառայություններ» սինթետիկ հաշվի «14.4» թիվը փոխարինել «0» թվով,

գ. 0133 ՔԿԱԳ պատվիրակված լիազորությունների 4214 «Կապի ծառայություններ» սինթետիկ հաշվի «192.0» թիվը փոխարինել «206.4» թվով,

դ. 0451 «Ճանապարհային տրանսպորտ» - ի 4251 «Շենքերի և կառույցների ընթացիկ նորոգում և պահպանում» սինթետիկ հաշվի «10750.0» թիվը փոխարինել «39275.5» թվով,

ե. 0611 «Բնակարանային շինարարություն» - ի 4521 «Սուբսիդիաներ ոչ պետական (ոչ համայնքային) ոչ ֆինանսական կազմակերպություններին» սինթետիկ հաշվի «3200.0» թիվը փոխարինել «3386.2» թվով:

զ. 0511 «Աղբահանում» - ի 4213 «Կոմունալ ծառայություններ» սինթետիկ հաշվի «58000.0» թիվը փոխարինել «66183.4» թվով:

4) Համայնքի բյուջեի ծախսերի ֆոնդային մասում կատարել հետևյալ փոփոխությունները.

ա. 0451 «Ճանապարհային տրանսպորտ» - ի 5113 «Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում» սինթետիկ հաշվին հատկացնել 16771.1 հազ. դրամ,

բ. 09-8-1 «Կրթություն (այլ դասերին չպատկանող)» – ի՝

բա. 5113 «Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում» սինթետիկ հաշվին հատկացնել 7600.0 հազ. դրամ,

բբ. 5131 «Աճեցվող ակտիվներ» սինթետիկ հաշվին հատկացնել 250.0 հազ. դրամ,

2. Թույլատրել գնումները կատարել Հայաստանի Հանրապետության «Գնումների մասին» օրենքի համաձայն:

Համայնքի ղեկավար Հ. Շահգալդյան

Քվեարկության եմ դնում որոշումը:

Կողմ - 10 **դեմ - 0** **ձեռնպահ -1**

Որոշումն ընդունված է /կցվում է որոշումը/:

Լսեցին.

6. *Չարենցավան համայնքի 2018 թվականի տարեկան բյուջեի կատարման մասին հաղորդում*

/Զեկ. Ս.Շահնազարյան/

Առաջարկում եմ հաստատել Չարենցավան համայնքի 2018 թվականի տարեկան բյուջեի կատարման մասին հաղորդումը

Համայնքի ղեկավար Հ. Շահգալդյան

Քվեարկության եմ դնում որոշումը:

Կողմ - 10 **դեմ - 1** **ձեռնպահ -0**

Որոշումն ընդունված է /կցվում է որոշումը/:

Լսեցին.

7. *Սոցիալական հատուկ արտոնություններ (այլ դասերին չպատկանող) հատվածից գումար հատկացնելու մասին:*

/Զեկ. Ս.Շահնազարյան/

Հաշվի առնելով Չարենցավան համայնքի Բջնի գյուղի 12 փողոցի 40 տան բնակիչ ***Մելիք Ջիվանի Գասպարյանի*** 2019 թվականի փետրվարի 02-ի թիվ 480-16 , Չարենցավան համայնքի Չարենցավան քաղաքի 3-րդ թաղ.19 շենքի 11 բնակարանի բնակիչ ***Գայանե Մկրտիչի Խաչատրյանի*** 2019 թվականի փետրվարի 26-ի թիվ 566-16 դիմումները և Հայաստանի Պաուերլիֆտինգի ֆեդերացիայի նախագահ՝ Գ. Սարոյանի 2019 թվականի մարտի 13-ի թիվ 787-04 գրությունը՝ Չարենցավան համայնքի Չարենցավան քաղաքի 2-րդ թաղ. 2 շենքի 16 բնակարանի բնակիչ ***Յուրի Նիկոլայի Սաքունցին*** ֆինանսական աջակցություն հատկացնելու մասին, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով՝***առաջարկում եմ*** Չարենցավան համայնքի սոցիալական հատուկ արտոնություններ (այլ դասերին չպատկանող) 4729 «Այլ նպաստներ բյուջեից» սինթետիկ հաշվից 150.0 հազարական դրամ հատկացնել ***Մելիք Ջիվանի Գասպարյանին, Գայանե Մկրտիչի Խաչատրյանին և Յուրի Նիկոլայի Սաքունցին:***

Համայնքի ղեկավար Հ. Շահգալդյան
Քվեարկության եմ դնում որոշումը:

Կողմ-11 **դեմ - 0** **ձեռնպահ -0**

Որոշումն ընդունված է /կցվում է որոշումը/:

Լսեցին.

8. *Չարենցավան համայնքի ղեկավարի տարեկան հաշվետվությունը 2018 թվականի համայնքի զարգացման հնգամյա ծրագրի իրականացման և 2019 թվականի տարեկան աշխատանքային պլանը հաստատելու մասին:*

/Զեկ. Ս.Մուրադյան/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետով և 82-րդ հոդվածի 7-րդ կետով, ***առաջարկում եմ*** հաստատել Չարենցավան համայնքի ղեկավարի տարեկան հաշվետվությունը 2018 թվականի համայնքի զարգացման հնգամյա ծրագրի իրականացման և 2019 թվականի տարեկան աշխատանքային պլանը հաստատելու մասին՝ համաձայն N N 1,2 հավելվածների:

Համայնքի ղեկավար Հ. Շահգալդյան
Քվեարկության եմ դնում որոշումը:

Կողմ-10 **դեմ - 1** **ձեռնպահ -0**

Որոշումն ընդունված է /կցվում է որոշումը/:

Լսեցին.

9. Փողոցի անվանակոչելու համար համաձայնություն տալու մասին:

/Զեկ. Ս.Մուրադյան/

Հաշվի առնելով Չարենցավան քաղաքի բնակիչ Համլետ Կոնջորյանի առաջարկությունը և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 22-րդ կետով. ***առաջարկում եմ*** տալ համաձայնություն Չարենցավան քաղաքի 6-րդ թաղամասի 4-րդ փողոցը անվանակոչելու ***Գևորգ Էմինի*** անունով :

Սույն որոշման կատարման հսկողությունը դնել քաղաքաշինության, ճարտարապետության, գյուղատնտեսության և բնակկոմունալ տնտեսության բաժնի պետ Բենիկ Բալաբյանի վրա:

Համայնքի ղեկավար Հ. Շահգալդյան
Քվեարկության եմ դնում որոշումը:

Կողմ-11 դեմ - 0 ձեռնպահ -0

Որոշումն ընդունված է /կցվում է որոշումը/:

Լսեցին.
10. Չարենցավան համայնքի Կարենիս գյուղի գլխավոր հատակագծի նախագիծը հաստատելու մասին;

/Զեկ. Ս.Մուրադյան/

Հաշվի առնելով քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի եզրակացությունը և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի «Հայաստանի Հանրապետության համայնքների /բնակավայրերի/ գլխավոր հատակագծերի և համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի մշակման փորձաքննության համաձայնեցման, հաստատման ու փոփոխման կարգը հաստատելու մասին» թիվ 1920-Ն որոշմամբ սահմանված կարգի 60-րդ կետի պահանջներով, ***առաջարկում եմ*** հաստատել Չարենցավան համայնքի Կարենիս գյուղի գլխավոր հատակագծի նախագիծը;

Սույն որոշման կատարման հսկողությունը դնել քաղաքաշինության, ճարտարապետության, գյուղատնտեսության և բնակկոմունալ տնտեսության բաժնի պետ Բենիկ Բալաբյանի վրա:

Համայնքի ղեկավար Հ. Շահգալդյան
Քվեարկության եմ դնում որոշումը:

Կողմ-11 դեմ-0 ձեռնպահ-0

Բաբայան Նարեկ
Բաբայան Վալերի
Գասպարյան Անատոլի
Գրիգորյան Հակոբ
Դավթյան Կարեն
Երիցյան Գագիկ
Խլղաթյան Արսեն
Վարդանյան Նորիկ
Վարդանյան Սարգիս
Սահակյան Երեմ
Պողոսյան Մնացական

Որոշումն ընդունված է /կցվում է որոշումը/:

Նիստն արձանագրեց Ս.Մուրադյան _____

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Հ.Կ.ՇԱՀԳԱԼԴՅԱՆ